



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2025 թվականի N 859-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 152-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 21-ի «Փորձնական ծրագիր իրականացնելու և գնման գործընթաց կազմակերպելու մասին» N 152-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 2-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա. ճաշարանախոհանոցային գույքը և սարքավորումները, ինչպես նաև «Հայր և որդի Երեմյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից

ձեռքբերված և զորամասերում շահագործվող դիզելային գեներատորները (այսուհետ՝ նաև գույք) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը սեփականության իրավունքով փոխանցելիս մասնավոր գործընկերոջը փոխհատուցվում է գույքի ձեռքբերման փաստաթղթերով հիմնավորված և սույն կետի 7-րդ ենթակետի համաձայն հաշվարկված՝ գույքի ձեռքբերման գինը ու սույն կետի 8-րդ և 9-րդ ենթակետով սահմանված կարգով հաշվարկված հարկերի, իսկ մասնավոր գործընկերոջ կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծման դեպքում՝ նաև պետական տուրքերի ու փոխադրման ծախսերի գումարները: Փոխհատուցումն իրականացվում է զորամասում գույքի փաստացի առկայությունը հավաստող երկկողմանի (զորամասի և կազմակերպության միջև) հաստատված հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ կազմակերպության կողմից կազմված՝ հանձնման-ընդունման արձանագրության և գույքի օտարման գործարքին վերաբերող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա: Փոխհատուցման ենթակա գույքի անվանացանկը և առավելագույն քանակը ըստ ճաշարանների սնվողների թվաքանակի՝ հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված,».

2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությունը.

3) 2-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) 2-րդ կետը լրացնել նոր 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) մասնավոր գործընկերոջ կողմից գույքի ձեռքբերման պահին Հարկային օրենսգրքի համաձայն՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու դեպքում, մասնավոր գործընկերոջը փոխհատուցվող գույքի ձեռքբերման գինն իր մեջ ավելացված արժեքի հարկ չի ներառում, իսկ գույքի ձեռքբերման պահին Հարկային օրենսգրքի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու դեպքում, մասնավոր գործընկերոջը փոխհատուցվող գույքի ձեռքբերման գինը ներառում է ավելացված արժեքի հարկ.

8) եթե գույքը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը սեփականության իրավունքով փոխանցելու պահին մասնավոր գործընկերը Հարկային օրենսգրքի համաձայն համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող, ապա մասնավոր գործընկերոջը փոխհատուցվում է այդ գործարքի մասով դուրս գրվող հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը.

9) եթե գույքը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը սեփականության իրավունքով փոխանցելու պահին մասնավոր գործընկերը Հարկային օրենսգրքով սահմանված կարգով համարվում է շրջանառության հարկ վճարող, ապա մասնավոր գործընկերոջը փոխհատուցվում է գույքի օտարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված շրջանառության հարկի հաշվարկում արտացոլված՝ միայն այդ գույքի օտարման գործարքից Հարկային օրենսգրքի համաձայն հաշվարկված՝ շրջանառության հարկի գումարը.

10) Գաղտնի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2019 թվականի մարտի 8-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան